



ARMENIAN CATHOLIC CHURCH OUR LADY OF THE ASSUMPTION

5 John Street, Lidcombe NSW 2141
P.O.BOX 315, Lidcombe NSW 1825

Tel: 9649 3380, Fax: 9649 3958

Mobile: 0427 404 952

Web: www.accsydney.org.au

Email: fr.basil@accsydney.org.au

1 August 2004

My Dear Parishioners,

I wish to remind you all once again that the August festivities from the 14th - to 21st is fast approaching us and I would like to take this opportunity to impress on all our Parishioners to take note of the above dates so that we can confidently ensure the success of these festivities and also ensure the full participation of all our dear parishioners.

These festivities as we have mentioned in our previous bulletins will commence Saturday & Sunday (14th and 15th) with a giant Bazaar and culminating with great Dinner Dance Saturday the 21st at the "Nilla" Lounge in Ashfield. Those of you who have not yet organized their tickets, to avoid disappointment I strongly advise you to actively seek and secure them as soon as possible. Please do not forget to alert your relatives and friends as it goes without saying we need you all there in great numbers.

The week's programme:

Saturday 14th Bazaar will commence at 10am and close for the day at 6pm... In addition to the variety of foods that will be available, the organizers will also be providing various games and activities for the children and adults. There will be a jumping castle (donated by Mr. and Mrs. Adel Halwagy) for the children. I would like to take this opportunity to extend them our sincere thanks for their kind gesture.

Sunday 15th The Bazaar will open its doors after the Holy Mass for the feast of our Lady of the Assumption and the blessing of the grapes.

In addition to the activities and the general exhibitions that will be displayed on this day, raffles will be sold and the Major lottery for the Gold (khatchkar) Cross (donated by Mr. & Mrs. Garo Tcherkezian) will be drawn late in the afternoon.

Tuesday 17th 7.30pm: Special Movie (40 Days of Musa Dagh) will be screened, and we encourage all to see this epic Movie which depicts the valor and the will of survival of our people.

Thursday 19th 7.30pm: Classical and Modern musical evening with Clarissa and Raffi Qasabian. Immediately after this concert, we will socialize and spend the rest of the evening together like a big family.

Saturday 21st: The Annual Ball of our Church, and as I have mentioned earlier secure your tickets in attend in great numbers with your families and friends.



✠ ԱԻԵՏԱՐԱՆ (Մատթ. 18, 10-14) ✠

✠ ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԸ ✠

«Ձգուշացե՛ք եւ մի՛ արհամարհե՛ք մէկը այս փոքրիկներէն, որոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն երկնաւոր Հօրս դէմքը: Մարդու Որդին եկաւ կորսւածը փրկելու: Չէ՞ք կարծեր, որ եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մէկը կորսուի, իննիսուն եւ ինը չի՞ թողուր լեռ եւ չ'երթար կորսուածը փնտռելու: Եթէ գտնէ գայն, աւելի կ'ուրախանայ անով քան իննսունիցնին համար, որոնք չէին կորսուած: Այսպէս երկնաւոր Հայրը, չ'ուզեր որ փոքրիկներէն մէկը կորսուի»:

✠ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԽԱՍԻՐԵԱԼ ՈՉԽԱՐԸ

Առաքելները կը սպասէին Արքայութիւն մը նման երկրայինին: Անոնք կը ձգտէին բարձրագոյն աթոռները գրաւելու: Անոնց յանկերգ հարցումն էր. «Ո՞վ է մեծը իրենց մէջ»: Եւ Յիսուսի պատասխանը յուսախար պահեց գիրենք. «Ձանացե՛ք միանալ Քրիստոսի ու մտնել Արքայութիւնը, վաղանցիկ աթոռներէն առաջ»:

Այս իրագործելու համար՝ պարտիմ նմանի մանուկներուն: Մանուկը, հոգիով աղփաւր՝ ամէն բան կը սպասէ ուրիշէն. «Երանի հոգիով աղփաւրներուն, որովհետեւ անոնց է երկինքի Արքայութիւնը»: Երբեք պիտի չ'մտնենք Արքայութիւնը մեր արժանիքներով, այլ համապատասխանելով Քրիստոսի նուիրեալ կեանքի արդիւններուն, որ կատարեց Հօր Աստուծոյ փրկչական կամքը ու զոհուեցաւ իւրաքանչիւրիս համար: Կը մտնենք Արքայութիւնը, մեր սրտերն ու ձեռքերը լի բարիքներով, գորս արտօնեցինք Քրիստոսի լեցնել՝ իր անհուն սիրով ու երկնային շնորհներով:

Մանուկը վստահութեամբ կը նետուի զինք սիրող գիրկը. որ իմաստութեամբ ու համբերութեամբ ամէն բան կարգադրող է եւ իւրաքանչիւրին երջանկութեան կարիքները յագեցնող, շնորհները հայթայթող: Անոր հոգին կը մեծարէ Տէրը, պարզելիչ ամէն բանի, կը բարձրանայ նիւթէն վեր ու կը մասնակցի աստուածային կեանքին: Ոչ ոքի վրայ կ'իշխէ Ան ու ոչ ոքի ազատութիւնը կը կաշկանդէ, այլ կը բարձրացնէ, կը սրբացնէ ու կ'երջանկացնէ:

Քրիստոնէաներս անխոնջ աշխատելու ենք՝ ձեռք ձգելու այս մանկութիւնը, ժպտերես ու թափանձիկ, որուն մէջ չկայ նենգութիւն եւ յետին կամք: Յիսուս, Սրտագէտը, մեզ լաւ կը ճանչնայ եւ գիտէ, թէ որքան հեռու ենք ուրիշի սէրէն եւ ինչպէս չենք կրնար հանդուրժել անոր գերակայութիւնը եւ թէ ինչպէ՛ս կը խորտակենք, կը ոտնակոխենք եսասիրութեամբ ու նախանձով: Անոր ուսերուն վրայ կը մագլցինք՝ հասնելու համար դիրքերու: Ան գիտէ, թէ հակառակ մեր բարի կամքին, կ'ընենք մեր չուզածը եւ չենք ըներ ինչ որ կ'ուզենք ընել:

Ան է բարի Հովիւր հոգիներուն, թողելով հօտը, կ'երթայ փնտռելու կորուսեալս, որ քրիստոնէական կեանքի մարտահրաւերներու ընթացքին, յաճախ զինք կը դաւաճանեմ ու ձեռքերս կը լուսամ եղբայրներուս անմեղ արիւնէն: Մեղքով ու ընչաքանցութեամբ կը վաճառեմ զինք: Առօրեայիս փոթորիկներուն մէջ, Իրմէ կը հեռանամ՝ յանձնուելով յուսախարութեան: Սակայն Ան կը մնայ մօտս, հետս ու մէջս, կը փնտռէ զիս սրտիս ժայռերուն ու միտումներուս մացառներուն մէջ, ինչպէս նաեւ մեղքերուս ձորերուն խաւարին մէջ:

Ան հանգիստ է իր ու Ս. Հոգւոյն գործօն ու անընդհատ ներկայութեամբը հօտին հետ, իրենց նշաններով ու թելադրանքներով: Ան զիս անհատապէս կը հետապնդէ, կարծե՛ք առանձին ըլլայի, կարօտ իր Սիրոյն: Զիս կը խթանէ վերադառնալու Եկեղեցւոյ գիրկը, մասնակցելու համար հայրական խնջոյքին: Իւրաքանչիւրին հետ կը վարուի առանձնայատուկ կերպով, համապատասխանելով պարագաներուն ու խառնուածքին:

Բարի Հովիւր կը տօնէ վերադարձը, որովհետեւ մարդացաւ, որպէսզի ըլլայ «մէկ հօտ ու մէկ հովիւ»: Հայրը կ'ուրախանայ, բոլոր գաւակները համախորմբելով հայրական սրտին մէջ: Ան ոչ ոքի անտերունչ կը թողու, յատկապէս տկարները, մանուկները, պարզերը, անտեսւածները, մեղաւորները, շնացողներն ու ապերախտները: Ան չ'ուզեր տեսնել մէկը՝ զոհ գայլին ու խաբերային:

Քաղաքական պատասխանատուները կ'անտեսեն մանուկներն ու անոնց մարդկային իրաւունքները: պետութիւններ, նոյնիսկ կը թոյլատրեն վիժումը, յառաջդիմութեան, զարգացումի ու մարդուն բարօրութեան անունով: Ճշմարիտ քրիստոնեան, Վարդապետին օրինակին համաձայն, կը դաստիարակէ մանուկը, կը խրատէ մեղաւորը, կ'ընդունի տկարը, կ'այցելէ հիւանդին ու բանտարկեալին, կը հոգայ ծերն ու անտէրը, կ'ընկերանայ բոլորին, որպէս հարազատներ, փառաբանելու համար Ս. Երրորդութիւնը:

✦ Ա.Ի.ԵՏԱՐԱՆԻ ՍԼԱՔ ՄԵԿՆՈՒԹԻՒՒՆՆԵՐ

- 1- Կորուսեալ ոչխարը կորսուած հաւատացեալն է դաւանանքին մէջ:
- 2- Այս առակը կը յայտնէ Յիսուսի ուրախութիւնը, վերագտնելով նշմարտութենէն ու քրիստոնէական հաւատքէն հեռացողը:
- 3- Այս առակով Յիսուս կը պատասխանէ բոլոր «անմեղներուն», որոնք չեն ուրախանար՝ տեսնելով վերադարձը մեղաւորին ու ուրախութիւնը Վարդապետին, անոր գղջումին:
- 4- «Հովի»-ի եւ «Հօտ»-ին նկարները Ս. գիրքի գործածուած պատկերներ են, բացատրելու համար հաղորդակցութիւնը Աստուծոյ եւ ժողովուրդին միջեւ: Մեղաւորին վերագտնուիլը նոյնպէս փրկչագործութեան աւանդական պատկերներէն է:
- 5- Առակին համանմանը կը գտնենք Ղուկասի Աւետարանին մէջ: Ան կ'ակնարկէ եկեղեցւոյ պետերուն «մանուկներու» նրկատմամբ, մինչ Ղուկաս՝ անով կ'ակնարկէ Աստուծոյ մեղաւորի փնտռումին:



ԼՈՒԻՃԻ ՕՐԻՈՆԷ (1872-1940)

Լուիսի Օրիոնէ ծնած է 23 Յունիս 1872-ին, Pontecurone քաղաքը, Իտալիոյ Թորթոնա թեմին մէջ: 13 տարեկանին կ'ընդունուի Ֆրանչիսկեաններուն Voghera վանքէն ներս (Pavie): Կարն ժամանակ մը ետք, կը լքէ վանքը հիւանդութեան պատճառաւ: 1886-1889-ին՝ կ'աշակերտի Ս. Յովհաննէս Պոստոլի, Վալտոնի ապաստանարանը, Թորինոյի մէջ:

6 Հոկտեմբեր 1889-ին, կը մտնէ Tortona-ի Նորընծայարանը, ուր կը դառնայ գործօն ընկերային ծառայող մը Ս. Մարգիանոյի բարեսիրական եւ Ս. Վենսանի շարժումներուն մէջ: Ան Թորթոնայի մէջ, 3 Յուլիս 1895-ին, կը հաստատէ մանչ պատանիներու առաջին պատասպարանը, անոնց ապահովելու համար, քրիստոնէական դաստիարակութիւն: Յաջորդ տարին, 15 Հոկտեմբեր 1893-ին, Լուիսի Օրիոնէ, 21 տարեկան նորընծայ, Ս. Պերնարտինոյի թաղամասի մը մէջ, կը հիմնէ դըպրոց մը, աղփատ երեխաներուն համար:

13 Ապրիլ 1895-ին քահանայ կը ձեռնադրուի ու իր հետ միասին հիմնած հաստատութենէն 6 աշակերտներ: Անմիջապէս ետք կը հիմնէ նոր տունը Մորնիֆօ Լոզանայի (Բաւի), Նօտոյի (Սիչիլիա), Ս. Բեմոյի եւ Հոնմի մէջ: Լուիսի Օրիոնէի շուրջ կը բազմանայ թիւը կղերականներուն եւ վարդապետներուն, որոնց հետ կազմեց «Աստուածային նախախնամութեան փոքրիկ ձեռնարկը»: 1899-ին՝ կը հիմնէ Աստուածային նախախնամութեան նգնաւորներու նիւղը:

Ինիսօ Պանտի, Թորթոնայի Եպիսկոպոսը, կանոնական վիճիով մը, 21 Մարտ 1903-ին, քանչցաւ «Աստուածային նախախնամութեան Զաւակներ (Վարդապետներ, աշխատաւոր եղբայրներ ու նրզնաւորներ)», որոնք նըւիրուեցան մօտեցնելու փոքրերը, աղփատներն ու ժողովուրդը Եկեղեցւոյ ու Սրբ. Քահանայապետին, ուխտելով չորրորդ ուխտ մը. «Հաւատարմութիւն Սրբ. Քահանայապետին»:

Հետաքրքրուեցաւ դարուն հարցերով. ազատութիւնն ու միութիւնը քրիստոնէաներուն: Եկեղեցւոյ ու հոգիներու փրկութեան հանդէպ ան եռանդով առաջին կանոնագրքին մէջ շեշտեց Քրիստոնէաներու Միութեան վսեմ եւ Աստուածահաճոյ առաքելութեան վրայ: Փութով օգնութեան հասաւ Ռեմնիոյի եւ Մէսսինայի (1908) եւ Մարսիգայի (1915) երկրաշարժներու աղիտեալներուն:

Լուիսի Օրիոնէ, 29 Յունիս 1915-ին, կը հիմնէ «Սիրոյ առաքեալ փոքրիկ
ժողովուրդի Միաբանութիւնը», որոնց առընթեր՝ Ս. Հաղորդութեան երկրպագող եւ
Խաչեցեալին հայեցող ժողովուրդի միաբանութիւնները: Ան կազմեց «Աստուածային
Նախախնամութեան Տիկիներու» եւ «Նախկին աշակերտներու» եւ
«Բարեկամներուն» աշխարհական միութիւնները:

Ա. Համաշխարհային Պատերազրագմէն ետք, բազմացուց դպրոցները,
վարժարանները, աշխատանոցները եւ բարեսիրական շարժումները: Ան հիմնեց
«Գոթովէնկոյի փոքրիկներուն» ձեռնարկը ամէնէն ծանր հիւանդներուն
տառապեալներուն ու անտեսուածներուն օգնութեան հասնելու համար:

Ան կը վայելէր գնահատանքը Քահանայապետներուն ու Ս. Աթոռին, որոնք
իրեն կը վստահէին եկեղեցական ու աշխարհական բարոյ պարագաներու լուծումը:
Հոչակաւոր քարոզիչ, խոստովանահայր ու հոգեւոր հայր մըն էր: Անխոնջ
կազմակերպիչ մըն էր նաեւ ուխտագնացութիւններու, քափօրներու ու հնարամիտ
կենդանի մտորներու: Տօն Օրիոնէ առաքելական եւ հոգեւորական առաջին
շրջապարտոյտն էր Պրագիլ (1913), Արժանքին, Ուրկուէյ (1921), Պաղեստին (1921),
Լեհաստան (1936): 1934-1937- թուականին կատարեց երկրորդ առաքելական
նամբորդութիւն մը, Լատին Ամերիկա, Արժանդին, Պրագիլ, Ուրկուէյ մինչեւ Զիլի:

Խոր Զերմեռանդութիւն ունէր Կոյս Մարիամին հանդէպ: Ան մարեմական
բարեպաշտութիւնը հրահրեց բոլոր մակարդակներուն: Նորընծաներուն եւ
աշակերտներուն մօտ քաջալերեց ձեռային աշխատանքի ձիրքը:

Սրտի եւ թոքի տառապալից հիւանդութենէ ետք կը վախճանի 12 Մարտ 1940-ին,
բացազանչելով. «Յիսուս, Յիսուս, ես քեզի կու գամ»: 26 Հոկտեմբեր 1980-ին Տօն
Օրիոն Երանելի կը հոչակուի Պօղոս Սրբ. Քահանայապետին կողմէ, իսկ 16
Մայիսին, 2004-ին, հոչակուեցաւ անոր սրբութիւնը:



First Holy Communion

I am pleased to announce that we have now 17 children to prepare for their first Holy Communion. All the parents have been informed and on Sunday 1st august the children will receive their first preparatory lesson by M/s Atashian and Fr Basil Sousanian. We anticipate that the First Holy Communion ceremony will take place on the 5th of December 2004. Any parent who wishes to include their child in this group may contact Fr Basil immediately.

1st Sunday Luncheon:

I would like to thank all those parishioners have donated all the previous Luncheons and I would like to inform you that the next 1st Sunday Luncheon will be prepared and donated by the Madfouni and Barekhan families.

Seniors Club

Due to the busy schedule in the month of August church celebrations, the senior's club activities will only take place on Friday 6th August after Mass (being 1st Friday of the Month) The Mass as usual will be celebrated at 10.30 am. So to all our regulars and first timers, please take note.

Movie Night on Friday 27th of august.

We will be screening the Lord of the Rings Part 2 (The Two Towers) at 7.30 pm. So let us see you once again in great numbers so that we may have an enjoyable evening together.

Special thanks go to Mrs Silva AnterAsian who has donated the beautiful Pieta which is adorning our church's wall.

All practical gifts and donations to the Bazaar and the Church's Annual Ball are welcome. And no matter how small or big we express our sincere gratitude in advance for this kind gesture.